«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
ք. Դիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

Ընդունելության թեստ 7-րդ դասարանի համար
Մայրենի

Անուն-ազգանուն_____ Ամսաթիվ_____

1.Լրացնել տեքստի բաց թողնված տառերը: [20]

Ավելի քան յոթ դար առաջ Եվրոպայից Ասիա ձգվող ճանապարհներով անցնում էր իտալացի հայտնի ճանապարհոր□ Մարկո Պոլոն: Այս մարդը կարողացավ ցրել Արևելքի և Արևմուտքի մի□և եղած անհայտության մշուշը: Պոլոն եղավ Հայաստանում, նրա սուր ա□քը շատ բան նկատեց, և հետո նա իր ու□եգրություններում չմոռացավ հիշատակել Փոքր Ասիայի քաղաքներում ապրող հայերի մասին, «…որոնք հյուսում են **աշխարհ**ի ամենագեղեցիկ գորգերը»: Այդ գրառումը հետաքրքիր հետևանքներ ունեցավ. 15-16-րդ դարերի եվրոպական նկարիչները իրենց կտավներում սկսեցին օգտագործել հայկական գորգերի պատկերներ: Այս□ր հայկական գորգը մեծ հա□բավ ունի: Ու□անկյունաձև **գեղարվեստական** այդ գործվա□քեղենը դարեր շարունակ ծառայել է հայ մարդուն որպես **սփռոց,** ծածկոց, վարագույր: Մեր երկիրը խավավոր գորգի, ինչպես նաև կարպետի ստե□ծման բնօ□աններից է:

Գորգերը հավերժ երիտասարդ են իրենց մի զարմանալի հատկությամբ. մեկ անգամ արարվելով՝ նրանց զար□անկարները չեն մոռացվում, այլ, նույնությամբ ըն□օրինակվելով **բազմաթիվ** վարպետների կողմից, փո□անցվում են սերնդից սերունդ: Հայկական գորգանա□շերը արտահայտում են ժողովրդական <u>հնագույն</u> պատկերացումներ, մարդկային եր□ակայության թռիչք: Ակնհայտ է, որ ուշադիր զ□ելիս դիտողի համար ասես ծաղկում է խորախորհուրդ□ առասպելների, զարմանահրաշ հեք□աթների աշխարհը:

Հայկական գորգերը **նշանավոր** են եղել նաև իրենց սքանչելի գույների շնորհիվ, որոնք ստացվել են հավա□ված բնական միջոցներից՝ տարբեր ծառերի կեղևներից ու տերևներից, բույսերի արմատներից, ծաղիկներից: Հայտնի են եղել իրենց ամենաա□ժեքավոր **գունանյութ**ի՝ որդան կարմիրի շնորհիվ:

2.Պատասխանել տեքստի շուրջ տրվող հարցերին: [10]

ա)Ի՞նչ դեր են ունեցել գորգերը հայերի կենցաղում:

_____

_____

_____

_____

բ) Տեքստից դուրս գրել գորգերը ներկող բոլոր միջոցները:

_____
_____

գ) Վերարտադրել, թե որն է հայոց գորգերի զարմանալի հատկությունը:
_____
_____
_____

3. Տեքստից դուրս գրել թավ գրված բառերը և որոշել դրանց տեսակն՝ ըստ կազմության: [6]

_____
_____
_____
_____
_____
_____

4. Տրված կաղապարներով կազմել բառեր: [6]
արմատ+ ա հոդակապ + արմատ _____
ածանց+ արմատ _____
արմատ+ածանց _____

5. Տեքստում գտնել տրված բառերի հոմանիշները և գրել դրանց դիմաց: [10]
ամենաթանկարժեք _____
հռչակ _____
հիասքանչ _____
նկար _____
արտանկարվել_____

6.*Քաղցր* բառը գործածել երկու նախադասություններում ուղիղ և փոխաբերական իմաստներով: [8]

_____
_____
_____
_____

7. Տրված բառերը գրել միասին, անջատ կամ գծիկով: [12]

Մեջք(մեջքի), մի(քանի), հյուսիս(արևելք), փոքր(ասիական), վեց(վեց), ոչ(ոք), հայ(պարսկական), սարե(սար), մուգ(կարմիր), տնից(տուն), ի(սպառ), երեսուն(ինը):

_____
_____
_____
_____
_____
_____

8.Տրված համանուններով կազմել նախադասություններ: [8]

եղանակ

_____

եղանակ

_____

աղի

_____

աղի

_____

9.Տրված դարձվածքների իմաստն արտահայտել մեկ բայով: [8]

գլխի ընկնել _____
թև առնել _____
հոգին հանել _____
աշխարհով մեկ լինել_____

10.ա) Տրված բառակապակցություններում ընդգծել մեկ մակդիր՝ *պայծառ օր, հուզախռիվ ալիքներ, ընդարձակ հորիզոն, սանձարձակ ջրեր, հորձանքով բախվել:* **[2]**

բ) Տրված նկարի շուրջ գրել նկարագրություն՝ օգտագործելով վերը նշված բառակապակցությունները: [10]